«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Էպոսի դերը հայրենասիրության և ազգային արժեհամակարգի ձևավորման գործում

Առարկան՝ Հայոց լեզու և գրականություն

Հետազոտող ուսուցիչ՝ Սարգսյան Սոնա

Ուսումնական հաստատություն՝ Նոր Կյուրինի միջնակարգ դպրոց

Երևան 2022թ.

Բովանդակություն

Բովանդակություն----------2
Ներածություն----------3
Նպատակը----------4
Ի՞նչ է էպոսը----------4
Ո՞րն է մեր ազգային էպոսը----------5-8
Սասնա ծռեր (համառոտ)----------9-11
Արդյո՞ք էպոսի միջոցով կարող ենք աշակերտների մեջ ձևավորել
հայրենասիրություն----------12-13
Ինչպե՞ս կարող ենք էպոսի միջոցով ձևավորել ազգային արժեհա-
մակարգ----------14-15
Որքանո՞վ է արդիական մեր էպոսի գաղափարախոսությունը---15
Եզրակացություն----------16
Գրականություն----------17

Ներածություն

Մեր երկրում աշակերտների արժեքային համակարգի ձևավորումը ներառված է ՀՀ պետական չափորոշչում՝ որպես հենց կրթության բովանդակային բաղադրիչ: Յուրաքանչյուր ուսումնական առարկայի մասով սովորողների պատրաստվածությունը ներկայացվող գիտելիքային պահանջների մեջ առանձին կետով նաև նշվում են արժեքները և դրանց ձևավորումը , որոնք պետք է տա դպրոցը: Այսօր աճող սերնդի դաստիարակության գործն ընթանում է տարբեր հանգամանքների ազդեցության ներքո՝ ժողովրդագրական, ազգային մշակութային, ընտանեկան, կրթական, հասարակական, սոցիալական և այլն: Հաշվի առնելով բազմաթիվ այս և այլ հանգամանքներ՝ ժամանակակից մանկավարժության համար խնդիր է դառնում սովորողների ազգային 2 գիտակցության ձևավորումը սեփական ժողովրդի պատմության ու մշակույթի հենքի վրա՝ չանտեսելով համամարդկային արժեքները: Նոր սերնդի արժեհամակարգի ձավորման, կրթության և դաստիարակության գործում լուրջ անելիքներ ունի հայ դպրոցը, որի գերնպատակն է կերտել բարոյական , ազգային արժեքներով օժտված , ազգային նկարագիր ունեցող սերունդ: Էպոսի ուսուցումը և յուրացումը եղել են և մնում են հայ դպրոցի հայոց լեզվի և գրականության ուսուցչի հիմնական խնդիրներից մեկը: Ժամանակակից մանկավարժության նպատակն է դաստիարակել,կերտել քննադատական միտք ունեցող,ինքնուրույն ,ինքնակրթությամբ մշտական զարգացումը կարևորող,բարձր պատասխանատվությամբ հասարակության անդամ,անհատ,որը կկարողանա համարձակ ընդառաջ գնալ այն բոլոր մարտահրավերներին ,որոնք ընթացող ժամանակը մշտապես դնելու է իր,իր հայրենիքի և աշխարհի առջև:

Քանի որ մեր հետազոտության թեման էպոսին է վերաբերում,ուստի նյութի ներածությունն սկսել եմ Հովհաննես Թումանյանի խոսքերով.***«Ոչ մի բանի մեջ ժողովուրդներն այնքան պարզ ու պայծառ չեն երևում, որքան էպոսում»:***Եվ երբ որ արդեն խոսք է գնում մեր էպոսի՝ «Սասնա ծռերի» դերի մասին,մեջբերել եմ այս անգամ արդեն մեր մեծն պոետի մեկ այլ խոսք. ***«Մեր էպոսը հայ ցեղի ապրած կյանքի և***

հոգեկան կարողությունների հոյակապ գանձարանն ու իր մեծության անհերքելի վկայությունն է աշխարհի առջև»:

Նպատակը---Այս թեմայի հետազոտության նպատակն է ուսումնասիրել և ներկայացնել էպոսում արտահայտված գաղափարները՝ մասնավորապես հայրենասիրությունը և ազգային արժեհամակարգը:Ուստի այս նպատակից էլ բխել է 3 խնդիր.

1. Արդյո՞ք էպոսի միջոցով կարող ենք աշակերտների մեջ ձևավորել հայրենասիրություն:

2.Ինչպե՞ս կարող ենք էպոսի միջոցով ձևավորել ազգային արժեհամակարգ:

3.Որքանո՞վ է արդիական մեր էպոսի գաղափարախոսությունը:

Ի՞նչ է էպոսը

Էպոս (հին հունարեն՝ «խոսք», «ասք», «պատմություն»), գործածվում է երկու իմաստով 1. Լայն առումով գրական երեք սեռերից մեկը (էպիկական, քնարական, դրամատիկական), 2. նեղ ժանրային առումով ժողովրդական հերոսական կամ ավանդական վեպ, վիպական բանահյուսության ծավալուն և բարդ տեսակ, որը բաղադրվում է վիպական ու պատմահերոսական երկերից, ավանդություններից, զրույցներից[։]

Ազգային էպոսը էպիկական բովանդակությամբ էպիկական ժանրի բանաստեղծության կամ գրականության գործ է, որը ավանդաբար ներկայացնում կամ արտացոլում է որևէ ազգի մշակութային կամ ինքնաճանաչողական ոգին, դա կարող է վերաբերել նաև ինքնուրույնության կամ անկախության ձգտող որևէ էթնիկական կամ լեզվաբանական խմբի։ Ազգային էպոսների մեջ հաճախ նկարագրվում է տվյալ ազգային էթնոսի ծագման և զարգացման պատմությունը. կամ պատմության մի մասը, կամ տվյալ ազգության ինքնորոշման կամ ինքնագիտակցման

պատմության կարևորագույն դրվագները և այլ ազգային խորհրդանշանների ծագման կամ ընդունման պատմությունը։

Աքադիան սալիկ, որի վրա հատված է Գիլգամեշի էպոսից

Ո՞րն է մեր ազգային էպոսը

«Սասնա ծռեր» կամ **«Սասունցի Դավիթ»**, հայ ժողովրդի ազգային էպոս կամ դյուցազնավեպ, որը ստեղծվել է ժողովրդական բանահյուսության հիման վրա։ Վիպասացների և բանահավաքների կողմից այն կոչվել է նաև **«Սասնա փահլևաններ»**, **«Սասնա տուն»**, **«Ջոջանց տուն»**, **«Սասունցի Դավիթ կամ Մհերի դուռ»**, **«Դավիթ և Մհեր»**, **«Դավթի պատմություն»**, **«Դավթի հեքիաթ»** և այլն։ Էպոսի

գաղափարական ոգին հայ ժողովրդի հերոսական մաքառումն է թշնամիների դեմ՝ հանուն ժողովրդի ազատության և անկախության, հայրենիքի և պետականության պահպանման: Հայոց դյուցազնավեպը գաղափարական առումով արտացոլում է նաև իրականությունից ունեցած դժգոհությունն ու կառուցվելիք արդար աշխարհի նկատմամբ ունեցած փափագը՝ բոլոր դեպքերում գովաբանելով օտարի լծի դեմ ելած ժողովրդի հերոսական պայքարը:

Էպոսը համահավաք տարբերակով կոչվում է **«Սասնա ծռեր»:** «Ծուռ» բառն այս պարագայում ունի իմաստային մի քանի նշանակություններ՝ դիվահար, խենթավուն, խելահեղ քաջ և այլն: Տվյալ հատկանիշներից յուրաքանչյուրն էպոսի հերոսների համար բնորոշ է այս կամ այն պարագայում: **«Սասնա ծռեր»** էպոսը կառուցվածքային առումով կազմված է վիպական չորս մասերից կամ ճյուղերից,որոնցից յուրաքանչյուրը կոչվել է տվյալ ճյուղի գլխավոր հերոսի անունով՝ **«Սանասար և Բաղդասար», «Մեծ Մհեր», «Սասունցի Դավիթ», «Փոքր Մհեր»:** Հերոսների այս չորս սերունդը միմյանց հետ կապված են ազգակցական կապերով: **«Սասնա ծռերի»** ամենաբնորոշ գիծը հերոսական անպարտելի ոգին է՝ պայմանավորված նրա նախահիմքում ընկած առասպելական դյուցազունների սխրանքներով և հայ ժողովրդի՝ իր ոսոխների, հատկապես արաբական բռնակալության դեմ մղած դարավոր պայքարով: Էպոսի ստեղծման հստակ թվականը մեզ հայտնի չէ, քանի որ վերջինս գալիս է ժամանակի խորքից և ունի պատմական խոր ակունքներ: Էպոսի ասացողները էպոսը պատմել են հայկական տարբեր բարբառներով, մեծ մասամբ մոկաց, մշո, սասնա, ինչպես նաև արարատյան: Էպոսի պատումներից մեկը 1874թվականին գրի է առել Գարեգին Սրվանձտյանցը՝ հրատարակելով **«Սասունցի Դավիթ կամ Մհերի դուռ»** վերնագրով:



1889 թվականին էպոսի մի տարբերակ գրի է առել Մանուկ Աբեղյանը, իսկ արդեն 1939 թվականին Հովսեփ Օրբելին՝ էպոսագետների խմբի հետ մեկտեղ, ստեղծում է 60 պատումներից բաղկացած համահավաք բնագիր։

Համահավաք բնագիրը թարգմանվել է ֆրանսերեն, չինարեն, անգլերեն (թարգմանիչ՝ Լևոն Զավեն Սյուրմելյան), հունարեն, ռուսերեն, գերմաներեն, վրացերեն, թուրքերեն, աղրբեջաներեն և այլ լեզուներով։ **«Սասնա ծռերն»** ամբողջական կամ մասնակի մշակել են նաև Ավետիք Իսահակյանը, Եղիշե Չարենցը, Սողոմոն Տարոնցին, Վիգեն Խեչումյանը, Հմայակ Սիրասը, Մկրտիչ Խերանյանը, Նաիրի Զարյանը և ուրիշներ։ Էպոսին բազմիցս անդրադարձել են կերպարվեստում (Հակոբ Կոջոյան, Երվանդ Քոչար, Միհեր Աբեղյան, Էդուարդ Իսաբեկյան, Արտաշես Հովսեփյան և ուրիշներ), երաժշտության մեջ (Գևորգ Բուդաղյանի «Խանդութ» երաժշտական կոմպոզիցիան՝ ըստ Ալեքսանդր Սպենդիարյանի երաժշտության, Էդգար Հովհաննիսյանի «Սասունցի Դավիթ» բալետ-օպերան և այլն), կինոարվեստում («Սասնա ծռեր», ռեժիսոր՝ Արման Մանարյան, 2010 թվական, մուլտֆիլմ), թատրոնում։

«Սասնա ծռեր» էպոսն ընդգրկված է Հայաստանի Հանրապետության ոչ նյութական մշակութային ժառանգության արժեքների ցանկում: Ոչ նյութական մշակութային ժառանգության պաշտպանության կոնվենցիայի Միջկառավարական կոմիտեի 7-րդ նստաշրջանը 2012 թվականի դեկտեմբերի 5-ին **«Սասնա ծռեր կամ Սասունցի Դավիթ էպոսի կատարողական դրսևորումները»** հայտն ընդգրկել է **ՅՈՒՆԵՍԿՕ**-ի մարդկության ոչ նյութական մշակութային ժառանգության ներկայացուցչական ցանկում:

Սասնա ծռեր (համառոտ)

«Սասնա ծռեր» էպոսն ունի 4 մաս կամ ճյուղ, որոնցից յուրաքանչյուրը կոչվում է հերոսներից մեկի սերնդի անունով՝ «Սանասար և Բաղդասար», «Մեծ Մհեր», «ՍասունցիԴավիթ» և «Փոքր Մհեր»:

«Սանասար և Բաղդասար» ճյուղը պատմում է առաջին սերնդի մասին: Հայոց Գագիկ թագավորը հարկատու է Բաղդադի կռապաշտ խալիֆին: Վերջինս, լսած լինելով Գագիկի արքայադստեր՝ Ծովինարի գեղեցկության մասին, ուզում է նրան կնության վերցնել, սակայն մերժում է ստանում: Վիրավորված խալիֆն ավերում է Հայոց աշխարհը: Ծովինարը որոշում է հոժարակամ դառնալ խալիֆի կինը՝ երկիրը ավերումից փրկելու համար:Լեռներում շրջելիս նա ծարավում է և Աստծուց ջուր է խնդրում: Հանկարծակի բխած Կաթնաղբյուրից Ծովինարը մի լիքը և մի կիսատ բուռ ջուր է խմում ու հղիանում: Հասնում է Բաղդադ: Որոշ ժամանակ անց ծնվում են Սանասարն ու Բաղդասարը, որոնք օրեցօր մեծանում ու հզորանում են: Խալիֆն ուզում է սպանել եղբայրներին, բայց նրանք են սպանում խալիֆին և իրենց մոր հետ փախչում են հայրենիք, հիմնում իրենց բերդը՝ Սասունը, հզորացնում ու շենացնում են այն: Սանասարն ամուսնանում է Դեղձուն–Ծամի հետ:Ունենում են 3 զավակ՝ Մհերը,

Ձենով Օհանը և Ցոան Վերգոն։

«Մեծ Միեր» ճյուղը պատմում է, որ Սանասարին հաջորդում է որդիներից ամենաքաջը՝ Միերը։

Այդ տարիներին Սասունը հարկատու է Մըսրա Մելիքին։ Չափահաս դառնալով՝ Միերը տիրություն է անում երկրին ու ժողովրդին։ Հացի ճանապարհը փակող հսկա առյուծի երախը պատռելով՝ երկու կես է անում, որի համար նրան կոչում են Առյուծաձև Միեր։

Այնուհետև Սպիտակ Դևից ազատում է գեղեցկուհի Արմաղանին ու ամուսնանում է նրա հետ։ Մենամարտում հաղթում է Մըսրա Մելիքին և Սասունն ազատում է հարկերից, հիմնում է Մարութա Բարձրիկ Աստվածածինը, Ծովասարը դարձնում է իր որսատեղին, կառուցում է

բերդեր ու կամուրջներ։ Մըսրում մեռնում է Մելիքը։ Նրա կինը՝ Իսմիլ Խաթունը, խնդրում է Միերին գալ և տեր կանգնել իր երկրին՝ գաղտնի մտադրություն ունենալով ժառանգ ունենալ նրանից։

Ծնվում է արու զավակ, որին Իսմիլ Խաթունը կոչում է Մելիք՝ մեռած ամուսնու պատվին։ 7 տարի Միերին իր մոտ է պահում է՝ արբեցնելով թունդ գինով։ Ի վերջո սթափվելով և զղջալով իր սխալի

համար՝ Միերը վերադառնում է Սասուն։ Արմաղանը

դժվարությամբ ներում է նրան։ Միերը նորից շենացնում է Սասունը։ Որոշ ժամանակ անց Արմաղանը ունենում է որդի, որին կոչում են Դավիթ։ Երեխայի ծնվելուն պես Միերն ու Արմաղանը մեռնում են։

«Սասունցի Դավիթ» ճյուղը պատմում է այն մասին, թե ինչպես են որբացած նորածին Դավթին ուղարկում Մըսր՝ Իսմիլ Խաթունի մոտ, որտեղ տղան մեծա -

նում է ժամ առ ժամ։Մըսրա Մելիքը փորձում է խորամանկությամբ սպանել Դավթին, բայց պատանի դյուցազնը հաղթահարում է բոլոր փորձությունները և վերադառնում է Սասուն։ Ձենով Օհանը Դավթին կարգում է գառնարած,

ապա՝ նախրապան, որսորդ։ Դավիթը սպանում է Սասունը

կողոպտած դևերին և երկրի ամբարները լցնում է բարիքներով,

միայնակ կոտորում է Մըսրա Մելիքի զորքին, վռնդում է նաև հարկահավաք Կոզբադինին։ Մելիքը բազմահազար զորքով ինքն է արշավում Սասուն։ Մենամարտի

ընթացքում Դավիթը սրի մեկ հարվածով երկու կես է անում խոր հորի մեջ թաքնված Մըսրա Մելիքին։ Սասունն ազատագրելուց հետո Դավիթը
նշանվում է Չմշկիկ Սուլթանի հետ , բայց լսելով Կապուտկողի արքայադուստր Խանդութի գեղեցկության մասին՝ մի շարք քաջագործություններից հետո ամուսնանում է նրա հետ։Ապա գնում է Գյուրջիստան և 7 տարի մնում այնտեղ։ Խանդութը ծնում է արու զավակ և անունը դնում է Մհեր։ Չափահաս դառնալով՝ Մհերը որոշում է գնալ և գտնել հորը։Ճանապարհին հայր ու որդի հանդիպում են և, իրար չճանաչելով, մենամարտում։ ԴավիթըՄհերի բազկապանից ճանաչում է որդուն և իր հետ մենամարտելու հանդգնության համար անիծում է.

«Անմա՛հ ըլնես, անժառա՛նգ»։

Դավիթն սպանվում է Չմշկիկ Սուլթանի աղջկա թունավոր նետից,
իսկ ամուսնուն հավատարիմ Խանդութը ցած է նետվում բերդի գլխից։

«Փոքր Մհեր» ճյուղը պատմում է, որ Դավթին փոխարինած Փոքր Մհերը պատերազմում է թշնամիների դեմ և հաղթում, սպանում է Չմշկիկ Սուլթանին՝ լուծելով հոր վրեժը։Ամուսնանում է գեղեցկուհի Գոհարի հետ։ Սակայն հոր անեծքը կատարվում է և Մհերը մնում է անժառանգ։ Մեռնում է Գոհարը։ Հողն այլևս չի դիմանում Մհերի ոտքերի տակ։Սասնա վերջին քաջազունը փակվում է Ագռավաքար ժայռում՝ պատգամելով.

Քանի աշխարք չար է,

Հողն էլ դալբցեր է,

Մեջ աշխարքին ես չեմ մնա։

Որ աշխարք ավերվի, մեկ էլ շինվի,

Երբոր ցորեն էղավ քանց մասուր մի,

Ու գարին էղավ քանց ընկուզ մի,

Էն ժամանակ հրամանք կա,

որ էլնենք էդտեղեն։

1.Արդյո՞ք էպոսի միջոցով կարող ենք աշակերտների մեջ ձևավորել հայրենասիրություն:

Մենք գիտենք, որ մեր ազգի՝ իբրև տեսակի գոյության հիմքը հայրենասիրությունն է, ազգապահպանությունը,որոնց լավագույն դրսևորումը տեսնում ենք մեր էպոսում:

Էպոսի գաղափարական բովանդակությունն ուսումնասիրելիս խնդիր է դրվում աշակերտների մեջ դաստիարակել այն ներկայացնող հիմնական տարրերը՝ հայրենասիրություն,ազնվություն,բարձր բարոյականություն:

Հայրենասիրությունն էպոսի կերպարների համար առիթից առիթ ի հայտ եկող երևույթ չէ: Դա նրանց առօրյան է,կյանքը,որ դրսևորվում է նրանց բոլորի տարբեր արարքներում՝ օտար զավթիչների դեմ մղած կռվում,երկրի շենացմամբ և կառուցմամբ զբաղվելիս, հասարակական անարդարությունների և ապօրինությունների դեմ պայքարում, հանուն ընտանեկան ավանդույթների պահպանման գործունեության ժամանակ, նույնիսկ բարկության կամ քնարական տրամադրության պահերին:

Ժողովրդասիրության ու հայրենասիրության փայլուն օրինակ է տալիս Առյուծաձև Մհերը: Իմանալով, որ երդմնազանց լինելու դեպքում ինքն ու կինը պետք է մահանան, նա դիմում է այդ քայլին, որպեսզի իրենից հետո Սասունն անտեր ու անպաշտպան չմնա: Օտար նվաճողների դեմ հայ ժողովրդի հերոսական պայքարը, սակայն, իր ամբողջական ու փայլուն արտահայտությունն է գտել էպոսի երրորդ ճյուղում՝ Սասունցի Դավթի կերպարի միջոցով: Մսրա Մելիքն ամեն ինչ անում է Սասնա ճրագը մարելու, Սասունը հափշտակելու համար: Բայց միշտ էլ նրա դեմ դուրս է գալիս ժողովրդի սիրելի զավակը՝ Դավիթը, խափանում օտար բռնակալի բոլոր դիտավորությունները:

Քանի որ երեխաներն ամռանը կարդացել են «Սասնա ծռեր» էպոսը (այն պատումը,որն ունի 4 ճյուղերն էլ),խմբային աշխատանքների միջոցով նրանց իսկ մասնակցությամբ գտնել,պարզել,վեր հանել և ապացուցել,որ «Սասնա ծռեր» էպոսի 4 ճյուղերը գլխավորող դյուցազուններն էլ բնութագրվում են հայրենիքին ու ժողովրդին

իրենց անձնուրաց ու անմնացորդ նվիրվածությամբ, նվաճողների և բռնակալների նկատմամբ՝ անողոքությամբ:Դրա վերաբերյալ բերել օրինակներ՝ էպոսից ընթերցելով տարբեր հատվածներ: Կատարել կերպարային վերլուծություն, որի մջոցով պետք է սովորողներին ցույց տալ ,որ հայրենասիրությունն ու ժողովրդասիրությունը էպոսի ոչ միայն տղամարդ հերոսներին է բնորոշ,այլ նաև կին:Եվ այս միտքն արտահայտելուց հետո «Մտագրոհ» մեթոդով աշակերտներին հանձնարարել թվարկել էպոսի հայ կանանց կերպարները և ընթերցել այն հատվածները,որոնցում ընդգծվում է կին հերոսների հայրենասիրությունը:Եվ այդ գործընթացից հետո աշակերտները մեկ առ մեկ ներկայացնում են իրենց դտարկումները:Այսինքն՝ հայրենասիրական ոգով աշակերտներին դաստիարակելու գործընթացը չի դառնում զուտ ակադեմիական դասախոսություն ուսուցչի կողմից,այլ դրան մասնակցում են նաև աշակերտներն իրենք էլ իրենց գործնական աշխատանքներով:

Աշակերտներն ուսուցչի օգնությամբ ներկայացնում են,որ էպոսն սկսում է Ծովինար անձնազոհ արարքով,երբ որոշում է ամուսնանալ բռնակալ և կռապաշտ Բաղդադի խալիֆի հետ,Դեղձուն-Ծամի պատասխանատվության զգացումը,որը նրան մղում է հագնելու ամուսնու զենքն ու զրահը և պաշտպանելու Սասունը,Արմաղանի երդմնազանց լինելը և իր կյանքի գնով Սասնա տանը ժառանգ թողնելը:Այսինքն՝ էպոսում մեր ժողովուրդը հայ կնոջը վերապահել է ոչ միայն տղամարդուն հավասար իրավունքներ,այլ նաև պարտականություններ,որով ցույց է տվել,որ հայ կինն իր հայրենասիրական ոգով,ազգային արժեքների ընկալմամբ,պետականության պահպանմամբ և բարոյական արժեքների բարձր ընկալմամբ բոլորովին չի զիջում հայ տղամարդուն:

Եվ այստեղ արդեն աշակերտների ինտեգրմամբ տալիս եմ առաջին հարցի պատասխանը,որ եթե սովորողին ճիշտ ուղղորդմամբ դրդենք հանձնարարության կատարմանը և մասնակից դարձնենք նյութի հաղորդմանը,հարցի ուսումնասիրությանը,ապա իսկապես կկարողանանք հատկապես էպոսի միջոցով դաստիարակել և ձևավորել հայրենասիրական վեհ գաղափարներով օժտված անհատ և քաղաքացի:

2.Ինչպե՞ս կարող ենք էպոսի միջոցով ձևավորել ազգային արժեհամակարգ:

Հայրենասիրությանը զուգընթաց պետք է զարացնել աշակերտների ազգային մտածողությունը,պետականության նկատմամբ ունեցած նրանց վերաբերմունքը:Եվ դարձյալ գործնական աշխատանքների միջոցով,խմբային գործունեությամբ և տարբեր մեթոդների կիրառմամբ՝ ԳՈՒՍ,ՔԱՌԱԲԱԺԱՆ,ՎԵՆԻ ԴԻԱԳՐԱՄ,ԱՐԵՎԱԾԱՂԻԿ , սովորողներին ներկայացնել ,որ «Սասնա ծռեր» էպոսի դյուցազունները՝ չորս գլխավոր հերոսները,ներկայացնում են սեփական գոյության պահպանման և ապրելու իրավունքի հաստատման համար մղվող հազարամյակների անհավասար պայքարը՝ պահելով մեր ազգային արժեքները,որոնք ժամանակի ընթացքում փոխում են իրենց ձևը,բայց բովանդակությունը նույնն է մնում:

Մեր էպոսը մեզ է հասել անաղարտ վիճակում, առանց անցնելու անհատական ստեղծագործության բովով, որով ավելի է բարձրանում նրա արժեքը որպես բուն ժո-ղովրդական մտածելակերպի արտահայտություն:

Սանասարն ու Բաղդասարը, հիմնադրելով Սասնա բերդը, ապահովում են ժողովրդի անվտանգությունն ու քրտնաթոր աշխատանքի անձեռնմխելիությունը: Նրանք, ինչպես նաև նրանց հետնորդները, իրենց գերմարդկային ուժն օգտագործում են ոչ թե սեփական փառք ու իշխանություն ձեռք բերելու նպատակով, այլ ի սպաս են դնում ժողովրդի բարօրությանն ու ազատ կյանքին: Բնութագրական է, որ Սանասարն ու Բաղդասարը առաջին հերթին Սասուն եկած աղքատների համար են տներ կառուցում, հետո՝ իրենց համար ամրոց: Մեծ Մհերը երկար ժամանակ սասունցիներին պահում է որսով: Դևերին սպանելուց հետո Դավիթը նրանց հափշտակած ոսկին բաժանում է ժողովրդին, ինքը բավարարվում միայն մի ձիով: Իսկ երբ հայրենիքի վրա կախվում է արտաքին վտանգը, նրանք առանց հապաղման դուրս են գալիս այն վերացնելու վճռականությամբ:

Սասնա դյուցազունները պայքարում են ոչ միայն հայ ժողովրդի, այլև ընդհանրապես ժողովուրդների խաղաղ ու երջանիկ կյանքի համար: Դա խաղաղության պայքարն է պատերազմի դեմ, կառուցման պայքարը՝ ավերումի դեմ, արդարության պայքարը՝ ամեն կարգի անարդարության դեմ:

Դավիթը ազատասեր ու հայրենասեր դյուցազն է, հատկանիշներ, որոնք ոչ թե ձեռքբերովի են, այլ բնածին ու ժառանգական:

Դավթին հրապուրում է կառուցման տենդն ու խաղաղ աշխատանքը, և ամեն ինչ անում է Մելիքին հասկացնելու համար, թե «ավեր բանից ի՞նչ կը դառնա»: Բայց երբ հայրենիքի ազատության վրա սև ամպեր են կախվում, նա ասպարեզ է իջնում՝ ուժ առած բռնակալների ու կեղեքիչների նկատմամբ տածած դարավոր ատելությունից: Հայրենիքը վտանգի մեջ է. պետք է դառնալ նրա փրկության զինվորը: Եվ Դավիթը, տեղեկանալով Մսրա Մելիքի գալստյանը, անհապաղ դուրս է գալիս թշնամու դեմ՝ ձեռքին առաջին պատահած ժանգոտ թուրը: Ճիշտ է, արտատեր պառավը անմիջապես շտկում է դրությունը. Դավիթը կռիվ է գնում հրեղեն զենք ու զրահով, հրեղեն ձիով, բայց բնութագրականն այն է, որ հայրենիքի զավակը հայրենիքի վտանգի պահին երկար մտածելու կամ պատրաստվելու անհրաժեշտության առաջ չի կանգնում: Իր գործն արդար է, ինքը պետք է հաղթի,այս համոզմունքն է ամուր նստած հերոսի ենթագիտակցության մեջ: Ամեն կարգի բռնակալներին ու կեղեքիչներին, հայրենիքի ու ժողովրդի բոլոր թշնամիներին պետք է անխնա ջնջել երկրի երեսից, այս ճշմարտության զինվորն է Դավիթը:

3.Որքանո՞վ է արդիական մեր էպոսի գաղափարախոսությունը:

Հարկ է այստեղ շեշտել,որ նկատելի է նաև այն հանգամանքը,որ կա միտում՝ մեր մեջ եղած ուժեղին թուլացնելու թե՛ էպոսում,թե՛ այսօրվա իրականության մեջ:Բայց բացահայտելով և իմանալով դրա մասին առավել,քան երբևէ,պետք է հստակ ձևավորել սովորողների մեջ ազգային կուռ արժեհամակարգ:

Եվ էպոսի մեջ ամրագրված արժեքների ներկայացմամբ ցույց տալ,որ դրանք դեռևս պահպանում են իրենց կենսունակությունը:

Զուգահեռներ անցկացնել էպոսի որոշ դրվագների և 2016թ.-ի ապրիլյան և 2020թ.-ի 44-օրյա պատերազմների միջև:

Եզրակացություն

Հակադրվելով ժամանակի տիրող մտայնությանը՝ ժողովուրդը առաջ էր քաշում պայքարի միջոցով ազատ ու երջանիկ կյանք ստեղծելու տեսակետը, մարդուն ամուր կապում երկրային կյանքին, լիցքավորում իրականության շահախնդրություններով:

Ուստի պետք է հետևություն անել,որ այսօր ինչ կատարվում է,էպոսի մեջ դրա հիմքը կա՝ ուժի տեսակետից,երդմանը հավատարիմ մնալու տեսակետից և այլն:

Էպոսի գաղափարական բովանդակությունը մեզ ուսուցանում է ունենալ ոչ միայն տարածքային-նյութական ընկալում,այլև հոգևոր:

Պատահական չէ,որ 1964թ. աշխարհի վիպերգերի միջազգային մրցույթում «Սասնա ծռերը» ճանաչվել է լավագույնը:



Գրականություն

1.Մ.Աբեղյան,Երկեր հ.1,Երևան,1966թ.

2.Է. Ջրբաշյան,Գրականության տեսություն 4-րդ հատոր,Երևան,1972թ.

3.Գրականություն,9-10-րդ դասարաններ,Երևան,2018թ.

4.Համացանց